

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՄԱՍՈՒԼԸ ՌՈՒՄԻՆԻԱՅՈՒՄ

Տ. Հեթում քահանա Թարվերդյան

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցի, Ախթալայի Հոգևոր Հովիվ:

Երկար ժամանակ Ռումինիայում հայկական տպագրության սկզբնավորումը նույնացվել է 1649 թ. Սուլավայում ընդօրինակված ձեռագիր Ավետարանի հետ: Վերոնշյալ Ավետարանն առաջին հայացքից տպագիր գրքի տպավորություն է թողնում՝ իր հավասարաչափ տողերով եւ ասես մեքենայական տողաշարով շարված լինելու համար: 1948 թ. նշանավոր հայագետ Սուրեն Քուլանջյանը Սուլավայի թանգարանում գտնում է այս ձեռագիրը եւ հիմնավորված քննությամբ ցույց է տալիս, որ այն ռումեն ուղղափառ եկեղեցու Սուլավայի մետրոպոլիտության կողմից համարվել է որպես 1648 թ. տպագրած հայերեն Ավետարանը :

Ռումինիայում տպագրված առաջին հայերեն գիրքը, որույս է տեսել 1847 թ. Յաշում, հայոց լեզվի մի այբբենարան է: 32 էջից բաղկացած այս գրքույկն ունի հետեւյալ ծավալուն վերնագիրը. «Բանալի ընթերցանութեան Մեսրոպեան տառից, որ է Այբբենարան եւ Հեգարան հայոց լեզուի Եաշ, Յասսի»: Սուլավայի Ավետարանից եւ այս այբբենարանից հետո հայկական տպագրության հաջորդ արտահայտությունը ռումինահայ համայնքում դարձել է նույն՝ 1847 թ. դարձյալ Յաշում հրատարակված քրիստոնեական վարդապետությունը՝ ներկայացված հայոց եկեղեցու վարդապետությամբ եւ դավանաբանությամբ: 24 էջից բաղկացած այս երկի վերստին ծավալուն վերնագրում ասվում է. «Քրիստոնեական վարդապետութիւն ըստ դաւանութեան Հայաստանեայց Սրբոյ եկեղեցոյն. Յարմարեալ ի պէտս նորահասակ մանկանց. Եաշ (Յասս)»:

Ինչպես նկատում ենք, հայկական հետքերը Ռումինիայում սկիզբ են առնում եւ կապվում երեք խորհրդանիշերի հետ՝ Ավետարան, Այբբենարան եւ Հայոց եկեղեցի: Մինչեւ 1847 թ. ռումինահայությունը նախորդ ավելի քան երկու դարերի ընթացքում եւս հաղորդակից է եղել տպագիր գրքի հայերեն արտահայտություններին, որի վկայությունն են

թե՛ Ռումինիայի Հայոց Թեմի Առաջնորդարանի գրադարանի հարուստ հավաքածուն՝ ամստերդամյան տպագրությունների եզակի օրինակներով, եւ թե՛ Գեռլա հայաքաղաքի հարուստ գրադարանը, ուր ամբարվել են դարձյալ մեծ թվով հնատիպ գրքեր, որոնց նկարագրությունը կատարել է Վիեննայի Մխիթարյան հայրերից Հ. Գ. Գովրիկյանը :

1847 թ. Յաշում տպագրված քրիստոնեական վարդապետությունը նաեւ ցույց է տալիս, թե ռումինահայությունն ինչ նախանձախնդրություն է ունեցել իր Մայր եկեղեցու հանդեպ:

Այս վարդապետությունը միջնադարյան հարցեր եւ պատասխաններ պարունակող ժողովածուների նման կազմված է հարցի եւ պատասխանի սկզբունքով եւ ունի երեք բաժին: Առաջին բաժինը նվիրված է քրիստոնեական հավատի բացատրությանը՝ համաձայն Հայոց եկեղեցու վարդապետության: Երկրորդ մասը վերաբերում է քրիստոնեական բարոյականությանը, երրորդը՝ քրիստոնեական առաքինություններին եւ բարի գործեր կատարելուն: Այս գրքույկը գրված է ժամանակի գրական-խոսակցական արեւմտահայերենով եւ ռումինահայ բարբառի տարրերով ու հետաքրքրություն է ներկայացնում նաեւ գրական արեւմտահայերենի ուսումնասիրման տեսանկյունից:

Ռումինահայ տպագրությանը որոշակիորեն մաս է կազմում Յաշի այս երկու հրատարակությունների հետ կապված հետեւյալ գիրքը. «Հայնակ եւ Մաճըռնակ Այբ ու Բենի թղթի. Շարադրեալ ի հայաքաղաքն Դրանսիլվանիոյ»: Այստեղ, անշուշտ, նկատի ունի Գեռլա քաղաքը: Հայաքաղաքում շարադրված լինելը նշանակում է, որ գիրքը գրվել է այնտեղ եւ ապա տպագրվել Վիեննայում՝ մխիթարյանների կողմից:

Վերոնշյալ գիրքն արդեն օգնում է անգամ պատկերացում կազմելու ռումինահայ բարբառի հնչյունական կազմի եւ բառերի արտաբերման ու հնչման մասին: Ռումինահայ տպագրության եւ գաղութի պատմության ուսումնասիրման տեսանկյունից մեծ արժեք ունի Արշակ Ալթունյանի «Տեղեկագրութիւն հայոց գաղթականութեան որք ի Մոլտո-Վալաքիա, Հունգարիա եւ ի Լեհաստան» 1877 թ. ֆոկշանում հրատարակված 164

գիրքը: Գրքի տիտղոսաթերթի դարձերեսին նշված է, որ այն տպագրվել է «ի տպարանի Հայաստանեայց ընկերութեան»: Ռումինահայոց պատմության մասին հետաքրքիր աշխատանք ունի Տ. Պետրոս քին. Մամիկոնյանը «Ռումինահայոց ներկայն եւ ապագայն», որը հրատարակվել է Գալացում 1895 թ. Տ. Ղեւոնդ քին. Փափազյանի տպարանում: Այս մասին Տ. Պետրոս քին. Մամիկոնյանը գրքի վերջում գրում է. «Կալացի հոգեւոր հովիւ Արժ. Տէր Ղեւոնդ քահանայ Փափազեան ունի հայերէն բաւական տպագրական տառեր, որոնցմով տպուեցաւ եւ սոյն տեղեկագրութիւնն»: Այս գործերի հետետողությամբ արեւելահայ մտավորականներից Լեւոն Բաբայանը 1911 թ. Թիֆլիսում հրատարակում է «Հայերը Մոլդավիայում եւ Բուքովինայում. պատկերազարդ պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն» գիրքը:

1890-ական թթ. վերջերին Գալացում են տպագրվել Մակար Ա Թեղուտցու հետ կաթողիկոսության թեկնածու եղած Տ. Մելքիսեդեկ եպս. Մուրադյանի երկու գրքերը՝ նրա աշխարհական անվամբ՝ Մուրատյան Գարեգին, «Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ, 1898 թ.», եւ «Մելքիսեդեկի եպիսկոպոսի Զմիռնիոյ նամականի առ

Տ. Կարապետ երէց Սեթեան, 1896 թ.»։ Գալացում տպագրված այս երկու գրքերից առաջինի համար որպես տպարան նշված է «Անի», իսկ երկրորդի համար՝ Տ. Ղեւոնդ քին. Փափազյանի տպարանը, որի մասին արդեն ասացինք: Ի դեպ, Տ. Ղեւոնդ քահանան ինքը եւս տարբեր գործեր է հեղինակել, ինչպես նաեւ 1902 թ. իր իսկ տպարանում հրատարակել է 16 էջից բաղկացած «Հրահանգիչ վեպեր» գրքույկը:

Ի դարի սկզբից ռումինահայ ազգային-հասարակական կենտրոնը դառնում է Բուխարեստը: Այն դառնում է նաեւ ռումինահայության տպագրության կենտրոնը: Այստեղ սկսում են հրատարակել պարբերական հրատարակություններ, որոնք նշանակալից տեղ են գրավում ընդհանրապես հայ մամուլի պատմության մեջ:

Ի դ. Ռումինիայում հայկական տպագրությունը կապվում է մեր եկեղեցու, հայագիտության եւ մշակույթի երկու նշանավոր դեմքերի՝ Հ. Ճ. Սիրունու եւ Հայր Մկրտիչ Պոտուրյանի հետ: Շատ գնահատելի եւ

արժեքավոր է Վենետիկի Մխիթարյան միաբանության հայրերից Հայր Մկրտիչ Պոտուրյանի վաստակը, ով Տրանսիլվանիայում իր հոգեւոր սպասավորության ընթացքում Ռումինիայում հրատարակում է իր հայագիտական եւ գեղարվեստական ուսումնասիրությունների մի մասը, ինչպես նաեւ մեծ դեր է խաղում գաղութի հասարակական կյանքում եւ պատմության ուսումնասիրման գործում՝ աշխատակցելով տարբեր պարբերականների:

Հ. Մ. Պոտուրյանի հրատարակություններից ուղղակիորեն ռումինահայ գաղութի հետ են կապվում «Գաղութահայ տարեգիրքը» (Պուքրեշ, 1940 թ.), ինչպես նաեւ «Հայ հանրագիտակը» (հտ. Ա, Պուքրեշ, 1938 թ.): Նույնը վերաբերում է եւ «Միջնադարեան տաղասաց Մարտիրոս Ղրիմեցի» (Պուքրեշ-Ֆրումոասա, 1924 թ.) ուսումնասիրությանը, քանի որ Ղրիմի հետ կապված այս ուսումնասիրությունն ուղղակիորեն վերաբերում է նաեւ ռումինահայությանը, ովքեր հաջորդներն են Անիից Ղրիմ փոխադրված գաղթականության:

Ռումինահայ միջավայրում Մխիթար Աբբահորը եւ Մխիթարյանների գործունեության լուսաբանմանն է նվիրված Հայր Մկրտիչ Պոտուրյանի «Մխիթար եւ Մխիթարեանք» (Պուքրեշ, 1922 թ.) հրատարակությունը:

Հայր Մկրտիչ Պոտուրյանի մի շարք պատմվածքներնվիրված են համիդյան ջարդերից մինչեւ հայոց Մեծ Եղեռն տեղի ունեցած իրապատումներին: Այդ գործերը Պոտուրյանն ի մի է բերել հետեւյալ երեք հրատարակություններում՝ «Սեւ էջը. ազգային նորավէպեր» (Վենետիկ, 1901 թ., Բ տպ., Ֆրումոասա), «Արմենակին յոյսերը» (Նորավէպ, Պուքրեշ, 1923 թ.) եւ «Կարմիր լուսին» (Ֆրումոասա, 1933 թ.):

Արեւմտահայ կյանքի եւ Մեծ Եղեռնի թեմաներով են գրված նաեւ Լանիս Լեւոնի «Արդարության կրակը» (Պուքրեշ, 1913 թ.) եւ Բյուրատ Սմբատի «Տէմիր Մուշլու Մշեցի կնոջ մը կեանքէն» (Պուքրեշ, 1916 թ.) գրքերը, որոնք, այդ թվում եւ Պոտուրյանի պատմվածքները, լինելով որոշակիորեն նկարագրական, պարունակում են ազգագրական գունեղ պատկերներ եւ արեւմտահայ տարբեր բարբառների կենդանի նմուշներ:

Բուխարեստում է հրատարակվել նաեւ Խ. Ոստանիկյանի «Կենսագրութիւն Մանուէլ Կ.Միրախորեանի» աշխատությունը (1935 թ.), որը պատմում է արեւմտահայ նշանավոր հասարակական գործիչ Մանուէլ

Կ. Միրախորյանի կյանքը: Բուխարեստում 1949 թ. հրատարակվում է նաեւ Վազգեն վարդապետի «Մեր պատարագը» գրքուկը: Վերջինս գրված է Հովհաննես Արծիշեցու Ս. Պատարագի խորհրդին նվիրված գործի հետետողությամբ, որին Վազգեն վարդապետը միախառնել է իր մտածումները: Նրա գրչին է պատկանում նաեւ 1954 թ. Բուխարեստում «Նոր կյանք» տպարանում տպագրված «Հայրենի արեւին տակ» գիրքը, ուր ի մի են բերված նրա տպավորությունները:

Հատկանշական է նաեւ, որ 1913 թ. Գեռլա քաղաքում հունգարերենով հրատարակվեց հայագիտության առաջին «Արմենիա» հանդեսը, որի առաջին տարվա հրատարակիչը եղել է Գրիգոր Գովրիկյանը, հետո Սոնգոտ Կրիշտոֆը՝ մինչեւ 1913 թ.: 1895 թ. Գալաց քաղաքում Տ. Ղեւոնդ քին. Փափագյանի ջանքերով հրատարակվեց «Հայկական տարեցույցերի» շարք: Հարկ է նշել նաեւ, որ Տ. Ղեւոնդ քահանա Փափագյանն այն ժամանակ, երբ նշանակվեց Գալացի ծխատեր քահանա, 1889 թ. Դանուբի ափին գտնվող քաղաքում ստեղծեց մի գրաշարանոց, որտեղ 11 տարվա ընթացքում տպագրեց 11 հայկական անուն գիրք: Նշենք նաեւ, որ 1892 թ. փետրվար ամսին Բրըլիաքաղաքում հրատարակվեց Հայ Հեղափոխական Դաշնակցության «Դրօշակ» պաշտոնաթերթի երրորդ համարը:

Ի դ. սկզբին՝ 1905 թ., Վարդան Մեսթուճյանը Բուխարեստում հունգարերենով հրատարակում է գրական պատմական «Աուրորա» հանդեսը: Հանդեսը լույս էր տեսնում ամիսը երեք անգամ, Ա 4 չափսով և տպագրվում էր տպագրատան մեջ: Լույս տեսավ ընդամենը 12 համար, վերջինը՝ 1906 թ. հուլիսի 1-ին:

Սակայն հայերեն առաջին պարբերականները եղել են «Մարո» երկշաբաթաթերթը (առաջին համարը՝ 1906 թ. հունիսի 1-ին) և «Արարատ» շաբաթաթերթը (առաջին համարը՝ 1907 թ. սեպտեմբերի 1-

ին)՝ երկուսն էլ սեւծովյան նավահանգիստ Կոստանցայի հայ եկեղեցու եւ դպրոցի հիմնադիր Մուրադ Գետրգյան Վանիգոգլուի հրատարակմամբ: Երկու թերթերն էլ բազմապատկվում էին շապիրոգրաֆի միջոցով:

1912 թ. հուլիսի 5-ը կարելի է համարել Ռումինիայի հայ մամուլի օր, քանի որ այդ օրը Բուխարեստում լույս է տեսնում հայերեն առաջին տպագիր պարբերականը: Խոսքը «Շեփոր» ամսաթերթի մասին է, որը լույս է տեսնում մեկ տարվա ժամանակահատվածում, եւ որի խմբագրատան հասցեն էր 27, Մեսե փողոց: Հայերեն տառերի տպագրական մամլամայրերը բերվել էին Կ. Պոլսից՝ հրատարակիչ եւ խմբագիր Լեւոն Շահագիզյանի ծախսերով: Հայ գաղութի նշանավոր դեմք հանդիսացած Լեւոն Լանիսը խթանեց Ռումինիայի հայկական մամուլի տպագրությունը՝ ամսաթերթ Շեփորից զատ հրատարակելով նաեւ պատկերազարդ երկլեզվյան՝ հայերեն եւ ռումիներեն «Հայաստանի Արծագանք» շաբաթաթերթը 1912-1914 թթ.:

Այդ առաջին փորձերից հետո Ռումինիայի հայ մամուլը մեծ թափ ստացավ, եւ մինչեւ մեր օրերը լույս են տեսել շուրջ 50 պարբերական հրատարակություններ:

1915 թ. Բուխարեստում լույս է տեսնում գրական-հասարակական-քաղաքական«Արաքս» շաբաթաթերթը՝ նախ Վարդան Մեսթուրյանի, հետո Ա.Նավարյանի խմբագրմամբ: 1916 թ. Բուխարեստում լույս է տեսնում Հնչակյան կուսակցության հրատարակած «Ինքնավար Հայաստան» թերթը (խմբագիր՝ Ս. Սապահ Գյուլյան): Շաբաթը մեկ անգամ 4-րդ էջը գրվում էր ռումիներեն: Այդ պարբերականը լույս էր տեսնում Ռուսչուկում հրատարակված բալկանյան մամուլի փոխարեն, որը քաղաքական հանգամանքների բերումով դադարել էր գործելուց:

1914-1916 թթ. Բուխարեստում իր տպագրատան մեջԱրիս Լազարը տպագրեց երեք ռումինահայ տարեցույցներ:

1920-1922 թթ. Բուխարեստում լույս է տեսնում «Մասիս» պարբերականը: Խմբագրապետն էր Հայր Մկրտիչ Պոտուրյանը, ով 1923 թ. դարձյալ Բուխարեստում հրատարակում է հայ գրականության եւ լեզվի «Դիցավան» տարեգիրքը՝ Ռուբեն Սեւակի, Մինաս Չերայի, Ավետիք

Իսահակյանի, Արշակ Չոպանյանի, Երվանդ Օտյանի մասնակցությամբ (տպագրատունը՝ Մասիս): Նույն հայ-կաթոլիկ Հ. Մկրտիչ Պոտուրյանի շնորհիվ լույս են տեսնում հետեւյալ հրատարակությունները՝ «Գաղութի Ձայն» (1923 թ.), «Փարոս» (1924 թ.), «Երկիր» (1925 թ., Բուխարեստ, լույս է տեսնում մինչեւ 1926 թ., հետո վերստին լույս է ընծայվում 1929 թ.)՝ Հարություն Աթանասյանի մասնակցությամբ):

1922 թ. Բուխարեստում լույս է տեսնում «Նոր Արշալույս» շաբաթաթերթը՝ մինչեւ 1935 թ.՝ նախ Պարույր Լեւոնյանի, իսկ վերջին տարիների ընթացքում միջպատերազմյան շրջանի հայ մամուլի կենտրոնական դեմքերից մեկի՝ Վարդան Մեսթուրյանի հրատարակմամբ:

Զենք կարող խոսել Վարդան Մեսթուրյանի հրապարակախոսական գործունեության մասին՝ առանց հիշելու նաեւ ուումինալեզու «Արարատ» ամսաթերթի մասին, որ լույս է տեսել մինչեւ 1942 թ. (տնօրեն Վարդան Մեսթուրյանի մահվան թվականը): Դա եղել է միջպատերազմյան շրջանի հայկական ամենաերկարակյաց պարբերականը, որը լույս էր տեսնում Սթրունկայի որբանոցի տնօրեն Արմենակ Մանիսալյանի հովանավորությամբ ու ֆինանսավորմամբ: Արշակ Բոգդան Քըուշի նախաձեռնությամբ թերթը վերահրատարակվում է 1990-ից սկսած՝ որպես Ռումինիայի Հայոց Միության պարբերական: Նույն Արշակ Բոգդան Քըուշը 12 տարեկանում Մեսթուրյանի «Արարատ» թերթում հրապարակում էր Վարդան Մամիկոնյանին նվիրված մի ոտանավոր: 1993 թ. հոկտեմբերից «Արարատ»-ը դառնում է երկշաբաթաթերթ:

Ռումինահայ մամուլ պատմության մեջ առանձին տեղ է զբաղեցնում պատմաբան Եւ արեւելագետ Հ. Ճ. Սիրունին, ով հիմնեց մի շարք պարբերականներ Եւ իր անգնահատելի ավանդը բերեց հայ ժողովրդի պատմությունը Եւ մշակույթը ճանաչելի դարձնելու գործում: Հ. Ճ. Սիրունու ղեկավարած առաջին պարբերականը հայերենով հրատարակված գրականության Եւ արվեստի «Նավասարդ» թերթն է, որ լույս է տեսնում 1921-1925 թթ. Բուխարեստում: Նախապես թերթը լույս էր տեսնում

Կ. Պոլսում: 1932 թ. մայիսի 15-ին Բուխարեստում լույս է տեսնում «Արագ» հայկական լրագիրը՝ նախ որպես կիրակնօրյա թերթ, հետո արդեն շաբաթը երկու անգամ՝ կիրակի եւ հինգշաբթի, իսկ վերջում երեք անգամ՝ երեքշաբթի, հինգշաբթի եւ ուրբաթ օրերին լույս տեսնող թերթ (խմբագրակազմը՝ Հ. Միրունի, Հ. Ավետիքյան, Թ. Թովմասյան, Վ. Չուլճյան): Թերթը լույս է տեսնում մինչեւ 1944 թ. ապրիլի 1-ը:

Սակայն Հ. Միրունու հրատարակած կարենորագույն եւ ամենաարժեքավոր պարբերականը եղել է 1935 թ. սկսած ռումիներենով լույս ընծայված հայ մշակույթի հանդես «Անի»-ն: Այն լույս է տեսնում պրոֆեսոր Նիկոլա Յորգայի հովանու ներքո: 1935-1938 թթ. լույս է տեսնում երեք ամիսը մեկ, հետո որպես տարեգիրք՝ 1941-1943 թթ.: 1990 թ. հետո «Արարատ» թերթի խմբագրության նախաձեռնությամբ հրատարակվեց «Անի» հանդեսի երեք հատոր. առաջինը՝ 1994 թ., երկրորդը՝ 1995-1996 թթ., երրորդը՝ 1997-1998 թթ.: Նոր գրաշարի բովանդակությունը հետեւում է Հ. Մ. Միրունու ուղուն՝ ճանաչելի դարձնելիայ մշակույթը եւ քաղաքակրթությունը:

Ոչ երկարակյաց պարբերականների շարքից կարող ենք թվարկել հետեւյալը՝ «Խարազան» (Բուխարեստ, 1921 թ.), «Արի» (ամսաթերթ, 1924-1926 թթ.), «Գարուն» (մանկական եւ երիտասարդական պատկերազարդ ամսաթերթ, խմբագիր՝ Հարություն Աթանասյան, Բուխարեստ, 1925 թ.), «Մեղու» (երգիծական թերթ, Բուխարեստ, 1925 թ.), «Օր» (Բուխարեստ, 1926 թ.), «Հրազդան» (քաղաքական եւ հայագիտական ամսաթերթ, խմբագիր՝ Սարգիս Սարունի, Բուխարեստ, 1927 թ.), «Հայաստան» (խմբագիր՝ Օննիկ Վարդանյան, Բուխարեստ, 1928 թ.): 1930 թ. Բուխարեստում լույս է տեսնում «Գիտություն» եւ «Գիտելիք» ամսաթերթը: Այն տպագրվեց Ֆրունդասայում եւ Բուխարեստում (խմբագիրներ՝ Հարություն Աթանասյան եւ Հայր Մկրտիչ Պոտուրյան): Լույս է տեսնում մինչեւ 1931 թ.: Դարձյալ Բուխարեստում լույս են տեսնում «Ազատ Բեմ»-ը (1932 թ.), «Հայ Մամուլ»-ը (Անկախ շաբաթաթերթ, 1932 թ.), «Գնաբեր-Քնաբեր» (երգիծական թերթ, խմբագրապետ՝ Հարություն Խնդիրյան, 1933-1934 թթ.):

1934 թ. լույս է տեսնում «Նոր Ուղի» երկլեզվյան շաբաթաթերթը: 1944-1945 թթ. դառնում է երկշաբաթաթերթ՝ որպես «Հայ հայրենասերների միության» պաշտոնաթերթ (խմբագիր՝ Հարություն Ասլանյան): 1934-1935 թթ. Ֆրունդասայում լույս է տեսնում մանկական «Կոկոն» թերթը (խմբագիրներ՝ նույն անխոնջ Հայր Մկրտիչ Պոտուրյանեի Հարություն Ասլանյան, որոնք միասին հրատարակեցին նաեւ մի ռումինահայ տարեցույց):

Դարձյալ Բուխարեստում 1937 թ. լույս է տեսնում «Հերկը», որը հրատարակվում է մինչեւ 1938 թ., հրատարակիչն էր Լեւոն Պալճյանը:

1939 թ. Սուրեն Քոլանջյանի հրատարակմամբ լույս են տեսնում «Արարատ» տարեգիրքը եւ արվեստի, թատերական-երաժշտական «Նվագ» թերթը:

Միջպատերազմյան շրջանում, ինչպես նաեւ պատերազմի ընթացքում լույս է տեսնում երկլեզվյան «Պահակ» շաբաթաթերթը (1935-1941 թթ.): Վերահրատարակվում է 1944-1946 թթ.՝ կրելով «Հայաստանյան» ճակատ անունը՝ որպես համանուն կազմակերպության պաշտոնաթերթ (խմբագիրներ՝ Հարություն Պապոյան, Ա.Տիրացյան, Տիգրան Տեր-Գրիգորյան): 1943 թ. Բուխարեստում լույս է տեսնում նաեւ «Ճակատ» լրագիրը:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ 1950 թ. մայիսին, հայերեն եւ ռումիներեն լույս է տեսնում պատկերազարդ «Սեւան» ամսաթերթը՝ Հայաստանյան ճակատ կազմակերպության հրատարակմամբ: Լույս է տեսնում մինչեւ 1958 թ. սեպտեմբերը:

1950 թ. մայիսին Բուխարեստում լույս է տեսնում «Նոր կյանք» շաբաթաթերթը՝ որպես Հայաստանյան ճակատ թերթի շարունակություն: 1982 թ. մայիսին դառնում է ամսաթերթ: 1990 թ.-ից հետո լույս է տեսնում Ռումինիայի Հայոց Միության հովանու ներքո՝ որպես ամսաթերթ: Խմբագիրներն են եղել Տիգրան Տեր-Գրիգորյանը, Թագվոր Շիշմանյանը, Սարգիս Սեյանը: Դա սփյուռքի ամենաերկարակյաց պարբերականներից է, որի աշխատանքն անընդմեջ շարունակվում է արդեն 62 տարուց ի վեր: